



Երիտասարդ Պատմագետների Ասոցացիա ՀԿ
նախաձեռնություն

Edu Armenia

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման
դասընթաց 2022

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Բուլինգ, կանխարգելիչ միջոցներ

Հետազոտող ուսուցիչ՝ Լուսինե Սամվելի Մկրտումյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ 1. ԲՈՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ	
1.1. ԲՈՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ և ՏԵՍԱԿՆԵՐԸ	4
1.2. ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎԱՐՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	6
1.3. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎԱՐՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	7
1.4. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎԱՐՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	8
ԳԼՈՒԽ 2. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ	
2.1. ԵՐԵԽԱՅԻ ՀԵՏ ԱՆՅԿԱՅՎՈՂ ԶՐՈՒՅՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	9
2.2. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՏԵԽՆԻԿԱՆԵՐ	14
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	25
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցում տիրող միջավայրը չափազանց կարևոր է բոլոր աշակերտների համար և այն մեծ ազդեցություն է թողնում նրանց հետագա կյանքի որակի վրա: Շատերը գիտեն ինչ է Բուլինգը, ինչ ազդեցություն կարող է թողնել երեխայի հոգեբանության վրա և ինչ հետևանքների կարող է հանգեցնել: Դրա համար կարևոր խորհուրդ բոլորին . մի՛ լռեք , խոսե՛ք այս խնդրի մասին, որովհետև Ձեր լռությամբ խրախուսում եք խնդրի տարածումը: Դպրոցում սովորող երեխաների առնվազն 60 % - ը տանը չեն հայտնում իրենց նկատմամբ իրականացված բռնության մասին: Խնդրի լուծման համար անելիք ունեն և՛ ծնողները, և՛ կրթության ոլորտի ներկայացուցիչները, և՛ իրավապահ մարմինները: Պետք է տևական և հետևողական աշխատանք հարցի արմատական լուծման համար:

Ընտրել եմ այս թեման, որովհետև դասարանում ունեմ այդպիսի աշակերտ, որը ունի պասիվություն, շարժումների և մտքի դանդաղում, հաղորդակցման ոչ լիարժեք հմտու-թյուններ, շարժումների և մտքի դանդաղում, հետաքրքրությունների բացակայություն, ինքնամփոփություն: Ցանկանում եմ իմ հետազոտությունների արդյունքում ձեռք բերած լուծումներով օգնել այդ երեխային:

ԳԼՈՒԽ 1. ԲՈՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1.1. ԲՈՆՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆՈՒՄԸ և ՏԵՍԱԿՆԵՐԸ

Չնայած այն հանգամանքին, որ 1989թ-ին ՄԱԿ-ն ընդունեց Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, որի 19-րդ հոդվածը անդամ պետություններին պատրավորեցնում էր վերջ տալ երեխաների հանդեպ բռնության բոլոր ձևերին, սահմանելով, որ *«Երեխաների հանդեպ բռնությունը նշանակում է երեխայի առողջությանը, կյանքին, զարգացմանը իրական կամ պոտենցիալ վտանգ հասցնող ֆիզիկական կամ էմոցիոնալ դաժանություն, սեռական բնույթի գործողություններ կամ անտեսման արարքներ՝ օգտվելով պաշտոնից կամ կարգավիճակից բխող լիազորություններից»*, այնուամենայնիվ մեր օրերում դեռևս դիտվում են բռնության արատավոր դրսևորումներ: Երեխաների հանդեպ բռնության պատճառներից մեկն այն է, որ երկար ժամանակ երեխաները իրավունքի սուբյեկտ չեն համարվել. ընդունված է եղել կարծել, որ երեխան ծնողի սեփականությունն է, և երեխաների հանդեպ դաժան վերաբերմունքը ծնողի իրավունքն է և դաստիարակության անբաժանելի մասը:¹ Բռնության կարող է ենթարկվել ցանկացած մարդ՝ անկախ սեռից, տարիքից, հասարակական և սոցիալական դիրքից, ազգությունից, մաշկի գույնից և *խոցելիության* աստիճանից²:

Բռնությունը մարդու վրա իշխանություն ձեռք բերելու և այն պահպանելու միջոց է: Ըստ առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների՝ յուրաքանչյուր 4-րդ հասուն մարդ մանկության շրջանում ենթարկվել է բռնության կամ դաժան վերաբերմունքի: Ամեն տարի մահվան ելքով բռնության զոհ են դառնում մինչև 15 տարեկան 41.000 երեխա: Նույն աղբյուրի համաձայն՝ այդ երեխաներից ամեն 4-րդը հաշմանդամություն ունեցող երեխա է: Ընդհանուր առմամբ հաշմանդամություն

¹ ՀՀ օրենքը երեխայի իրավունքների մասին, Երևան 1996, էջ 2:

² Психологическая помощь детям — жертвам насилия / Составитель О.А. Пчельникова. — Ижевск: Ижевская городская общественная организация «Центр социальных и образовательных инициатив», 2012. — 48 с

ունեցող երեխաները չորս անգամ ավելի շատ են ենթարկվում բռնության, քանի որ առավել անպաշտպան են և ունեն՝

Խնամք իրականացնողներից ավելի մեծ կախվածություն,

Ինքնապաշտպանության նվազ արտահայտված հմտություններ,

Սոցիալական ներառման պակաս:

Առանձնացնում են բռնության հետևյալ տեսակները՝

Ֆիզիկական

Մանկավարժական

Սեռական

Անտեսում

Տնտեսական

Հարկ է նշել, որ երեխաների հանդեպ առավել հաճախ կիրառվում են բռնության տեսակներից՝ ֆիզիկականը, մանկավարժականը, անտեսումը, սեռականը և ինչպես ցույց են տվել հետազոտությունները նշված բռնության տեսակները գրեթե միշտ առկա են լինում զուգակցված: Երեխաները կարող են բռնության ենթարկվել ընտանիքում, փողոցում, խնամքի կենտրոններում, դպրոցում, համացանցում ինչպես մեծահասակների այնպես էլ հասակակիցների կողմից: Դպրոցում, բակում հասակակիցների կողմից շատ հաճախ դրսևորվող երևույթ է բուլլինգը՝ հետապնդում, նվաստացում. մի իրավիճակ է, երբ մեկ կամ մի քանի հոգի ժամանակ առ ժամանակ կամ մշտապես ծեծում, վիրավորում, նվաստացնում, հետապնդում են ուրիշ մարդու: Հաշմանդամություն ունեցող երեխաները առավել հաճախ են ենթարկվում բուլլինգի (ծաղրանք, նվաստացում): Հայաստանում հաշմանդամություն ունեցող երեխաների շրջանում 52 %-ը ենթարկվում է բուլլինգի, այսինքն՝ ֆիզիկական կամ մանկավարժական բռնության՝ ոչ այդքան պաշտպանված և տարբերվող լինելու պատճառով: Մեր օրերում լայն տարածում ունի նաև կիբերբուլլինգը, որն արտահայտվում է առցանց հայհոյանքների, շանտաժների, դրամաշորթումների, նկարները տարածելու և սպառնալիքների ձևով:

1.2. ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԵՐԵՄԱՆԵՐԻ ՎԱՐՔԱՅԻՆ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մշակութային առանձնահատկություններ,

Գենդերային խտրականություն,

Հայրիշխանական կարծրատիպեր և դրանք վերարտադրող դաստիարակություն,

Երեխայի դաստիարակության հարցում ընտանիքի անդամների միջև դերերի սխալ բաշխում,

Սթրեսային իրավիճակներ. երբ ծնողները կորցրել են մոտ հարազատ, կամ գտնվում են տնտեսական ճգնաժամի մեջ,

Տարբեր նյութերի չարաշահում և կախվածություն՝ ալկոհոլ, թմրանյութ,

Դաստիարակության ոճերի սխալ ընտրություն,

Երեխայի հնարավորություններին անհամապատասխան պահանջների ներկայացում,

Ընտանիքում հոգեկան հիվանդությունների առկայություն,

Սոցիալ-տնտեսական ոչ բավարար վիճակ՝ անօթևանություն, անհրաժեշտ սնունդով և հագուստով ապահովելու անհնարինություն,

Հաշմանդամություն:

Բռնության ենթարկված երեխաների վարքային և մանկավարժական առանձնահատկությունները

Բռնության հետևանքները կարող են տարբեր լինել, սկսած՝ աննշան և պրակտիկորեն անձի զարգացման վրա ոչ մի ազդեցություն չունեցող հետևանքներից, մինչև ամենալուրջ խանգարումներ, ինչպիսիք են՝ հոգեպաթոլոգիան, ինքնառնջազնոց և հակասոցիալական վարքային դրսևորումները: Այս ամենը պայմանավորված է

երեխայի առանձնահատկություններով, տարիքով, բռնությունն իրականացնող անձի հանդեպ ունեցած վերաբերմունքով:

Այսպիսով երեխայի ֆիզիկական վիճակը, վարքային և հոգեկան ապրումների որոշ դրսևորումներ կարող են մեզ հուշել երեխայի հանդեպ բռնության առկայության մասին:

Բռնության ֆիզիկական ախտանշաններ՝

Կոտրվածքներ,

Մարմնի տարբեր հատվածների վնասվածքներ՝ քերծվածքներ, վերքեր:

Այրվածքներ՝ ծխախոտի, արդուկի,

Բռնության վարքային ախտանշաններ՝

Ագրեսիվություն,

Նյարդայինություն,

Մեկուսացում,

Վախ

Տագնապայնություն:

Բռնության մասին կարող ենք իմանալ ինչպես երեխայի կողմից տրվող ուղղակի տեղեկատվությամբ այնպես էլ անուղղակի.

Անուղղակի տեղեկատվություն. Երեխաները շատ հաճախ անուղղակի կերպով կարող են հայտնել, որ ենթարկվում են բռնության, օրինակ՝

Երեխան մեծահասակի արձագանքը ստուգելու համար պատմում է միպատմություն, որը տեղի է ունեցել իր ծանոթներից մեկի հետ:

Պատմում է որևէ հորինված կամ կեղծ պատմություն:

1.3. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԵՐԵՄԱՆԵՐԻ

ՎԱՐՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6–10 տարեկան երեխաների վարքային և մանկավարժական առանձնահատկությունները՝

Պասիվություն,

Ուսումնական ցածր մոտիվացիա,
Հետաքրքրությունների բացակայություն,
Շարժումների և մտքի դանդաղում,
Նեգատիվիզմ,
Ենթարկվող վարք՝ ծայրահեղ զիջողականություն,
Ուշադրությունը կենտրոնացնելու դժվարություն,
Էնուրեզ (գիշերամիզություն),
Ինքնամփոփություն,
Անինքնավստահություն,
Ցածր ինքնագնահատական,
Հաղորդակցման ոչ լիարժեք հմտություններ,
Ագրեսիվություն,
Դաժանություն կենդանիների նկատմամբ,
Խաբեություն և գողություն,
Վնասվածքները թաքցնելու ձգտում,
Դպրոցից հետո տուն վերադառնալու ցանկության բացակայություն:

1.4. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲՈՒՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԵՐԵՄԱՆԵՐԻ ՎԱՐՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ցածր ինքնագնահատական,
Անլիարժեքության զգացում,
Մշտապես ցածր տրամադրություն,
Անպետք լինելու զգացում,
Վախ պատժվելուց,
Լարվածություն,
Անարգանք և անվստահություն մեծահասակների նկատմամբ,
Քնի խանգարումներ,
Ախորժակի խանգարումներ,

Ինքնասպանության մտքեր³:

ԳԼՈՒԽ 2. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. ԵՐԵԽԱՅԻ ՀԵՏ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԶՐՈՒՅՑԻ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բռնության ենթարկված երեխայի հետ մանկավարժական աշխատանքի հիմնական նպատակն է՝ տրավմատիկ փորձի նվազեցումն ու վերացումը:

Խնդիրները՝

Նպաստել երեխայի մոտ բռնության հետևանքով առաջացած անօգնականության, մեղքի և ամոթի զգացումների նվազմանը,

Երեխայի մոտ ձևավորել դրական ես կոնցեպցիա, նպաստել երեխայի սեփական կարևորության զգացման ամրապնդմանը, բանական արդյունավետ աշխատանքը կառուցված է մի քանի փուլերից, ստորև ներկայացնում ենք դրանք՝

Քայլ 1. Երեխայի հետ նախնական կապի հաստատում

Այս փուլում մանկավարժի առաջնային նպատակը դա երեխայի *մանկավարժական անվտանգության ապահովումն է*, այս փուլն իր մեջ ներառում է հետևյալ ասպեկտները՝

Պարզել, թե որտեղ են երեխայի վարքին բնորոշ մանկավարժական բացասական ախտանիշները և որքանով են դրանք վտանգավոր ապագայում:

Պարզել, թե ինչպիսի՞ մանկավարժական տրավմաներ է ստացել երեխան:

Բացահայտել և գնահատել երեխայի մոտ առկա դրական ռեսուրսները:

Նշված կետերը բացահայտելու, երեխային մանկավարժական օգնություն ցուցաբերելու համար առաջին հերթին իրականացվում է երեխայի դիտարկում և զրույց, իսկ բռնության ենթարկված երեխաների հետ տեղի ունեցող զրույցի կառուցվածքը ունի որոշակի առանձնահատկություններ, որոնց իմացությունը կնպաստի մասնագետի և

³ Зинovieва Н. О., Михайлова Н. Ф. Психология и психотерапия насилия. Ребенок в кризисной ситуации. -СПб.: Речь, 2003. -248 с.

երեխայի միջև վստահելի հարաբերությունների հաստատմանը և կբացառի երեխային վնասելու հնարավորությունները:

**Բռնության ենթարկված երեխաների հետ անցկացվող զրույցի
առանձնահատկությունները**

Մանկավարժական զրույցը պետք է ունենա երկու նպատակ՝

Երեխայի մոտ ձեռք բերել վստահություն

Ստանալ հնարավորինս շատ ինֆորմացիա

Բռնության ենթարկված երեխաների մեծամասնության մոտ կարող են առաջանալ վստահելի հարաբերությունների ստեղծման դժվարություն, ինչը կարող է պայմանավորված լինել մի քանի հանգամանքներով.

Երեխայի մոտ ամբողջությամբ կորուսվել է վստահությունը մեծահասակների և աշխարհի նկատմամբ,

Երեխայի համար դժվար է բառերով արտահայտել այն, ինչ պատահել է իր հետ: Մասնագետի հետ շփվելու ցանկության դիմադրությունը կարող է պայմանավորված լինել հիշողության մեջ բացասական փորձի վերականգնմամբ, ամոթի և մեղքի զգացումներով, մեծահասակների բացասական արձագանքի և հնարավոր մեղադրանքների մտավախություններով:

Զրույցը հաջող սկսելու համար առաջարկվում է մի քանի տարբերակ՝

Փոքր տարիքի երեխաներին կարելի է առաջարկել միասին խաղալ, որից հետո երեխային տալ ընդհանուր հարցեր ընտանիքի, ընկերների, դաստիարակաների մասին, եթե երեխան իրեն արդեն լավ է զգում կարելի է նրան բացատրել հարցեր տալու հիմնական նպատակը:

Ավելի մեծ տարիքի երեխաների հետ նպատակահարմար է խոսել չեզոք թեմաներից՝ դպրոց, նախասիրություններ, ընտանիք:

Եթե այնուամենայնիվ երեխաները դժվարանում են խոսել իրենց խնդրի մասին, ապա, կարելի է առաջարկել մի քանի տարբերակ՝

Խաղ տիկնիկներով 2-7 տարեկան երեխաների համար:

Նկարչություն 5 տարեկանից սկսած:

Պատմությունների ստեղծում:

Այն դեպքում, երբ բռնության փաստը հաստատված է, և երեխան հեշտությամբ շփման մեջ է մտնում, ապա բռնության ենթարկվածի հետ աշխատանքի հիմնական նպատակը պետք է լինի նրան աջակցելը՝ թույլ տալ, որ խոսի և լսել նրան:

Ձրույցի ընթացքում անհրաժեշտ է ուշադիր լսել երեխային. ամբողջ ուշադրությունը երեխային տրամադրելով, մենք երեխային ցույց ենք տալիս, թե որքան ճիշտ է նա անում մեզ հետ անկեղծանալով:

Ձրույցի ընթացքում չպետք է երեխային ընդհատել հարցերով կամ սեփական բառերով լրացնել երեխայի խոսքը՝ ճնշման զգացում չստեղծելու նպատակով:

Ձրույցի ընթացքում արդյունք ստանալու համար անհրաժեշտ է պահպանել հանգստություն, որպեսզի երեխային չվախեցնենք մեր գայրույթով կամ անհանգստությամբ, հատակապես այն ժամանակ, երբ բռնարարը մերձավոր ազգական է:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել երեխայի խոսքին: Հաճախ միջադեպը նկարագրելիս բռնության ենթարկվածը կարող է օգտագործել այնպիսի բառեր, որոնք դուրս են մեծահասակի պարկեշտության սահմաններից, սակայն, եթե մասնագետը ցանկանում է հասնել իր նպատակին, ապա պետք է ընդունի երեխայի խոսելաձևը և զրույցի ընթացքում օգտագործի այն նույն բառերը և անունները, որոնք օգտագործում է հենց ինքը երեխան: Երեխայի հետ խոսելիս չպետք է միարժամանակ տալ երկու իրարամերժ հրահանգներ՝

Պատմիր այն ամենը, ինչ տեղի է ունեցել:

Մի՛ օգտագործիր անպարկեշտ բառեր:

5. *Անհրաժեշտ է տեղեկություններ հավաքել երեխայի, նրա հետաքրքրությունների, ընտանիքի, բռնության իրավիճակի մասին,* բայց այնուամենայնիվ երեխայի հետ զրույցի ընթացքում պետք է օգտագործենք այն տեղեկատվությունը, որի մասին

պատմել է հենց ինքը երեխան, և ոչ մի դեպքում ճնշում չգործադրել երեխայի վրա ակնարկելով, որ մասնագետը «ամեն ինչ գիտի»:

6. *Մանկավարժը չպետք է խուսափի քննարկել իրավիճակը երեխայի հետ՝* մտավախություն ունենալով, որ նման քննարկումները կարող են հոգեկան նոր վնասվածքների պատճառ հանդիսանալ: Եթե երեխայի մոտ բանավոր խոսքը դեռևս լավ զարգացած չէ, մասնագետը կարող է խաղի, նկարչության կամ ինքնարտահայտման այլ միջոցներով խթանել երեխայի արձագանքը ստեղծված իրավիճակի շուրջ: Բռնությամբ պայմանավորված հուզական վերապրումները հաճախ ուղեկցվում են կոգնիտիվ շեղումներով: Երեխան կարող է բռնության մեջ մեղադրել բռնություն չիրականացրած անձանց՝ ինքն իրեն, մյուս ծնողին, եղբայրներին կամ քույրերին: Միայն մանկավարժի անմիջական միջամտության շնորհիվ է հնարավոր շտկել կոգնիտիվ նման շեղումները⁴:

7. *Մասնագետի հարցերը, խոսքային և ոչ խոսքային պատասխանները պետք է գուրկ լինեն գնահատողական վերաբերմունքից:* **Շատ երեխաներ ֆիզիկական բռնությունը գնահատում են ծնողի տեսանկյունից** (արդարացի-անարդարացի, մեղավոր-անմեղ և այլն), հետևաբար՝ կարևոր է, որ մանկավարժը տա ֆիզիկական բռնության հստակ գնահատականը: Մինևույն ժամանակ, պետք է հաշվի առնել, որ երեխաները հակված են նույնականացվելու իրենց ծնողների հետ, հետևաբար, վերջիններիս վարքի կտրուկ քննադատումը կարող է խզել երեխայի և մանկավարժի միջև ձևավորված կապը: Ֆիզիկական բռնությանը գնահատական տալուց բացի, մանկավարժը պետք է շատ զգուշավորությամբ քննադատի բռնություն իրականացնող ծնողի վարքը:

8. *Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն վայրին*, որտեղ պետք է տեղի ունենա զրույցը, սովորաբար երեխան ոչինչ չի հայտնի բռնության մասին, եթե գտնվի այն վայրում, որտեղ կատարվել է բռնությունը: Այն վայրը որտեղ պետք է անցկացվի զրույցը պետք է լինի հարմարավետ երկարատև աշխատանքի համար և հաճելի երեխային:

⁴ Догатина М. А., Пережогин Л. О. Выявление, профилактика, реабилитация потерпевших. М.,: Сам себе адвокат, 2000.

9. Մասնագետի կամ առհասարակ երեխայի հետ շփվող անձի խոսքը, ձայնը, պետք է լինի հանգիստ, բարեհամբույր և գործնական:

10. Շատ կարևոր է խուսափել շարունակական և ուշադիր աչքի կոնտակտից, դա կարող է վախեցնել երեխային: Հատուկ դեպքերում կարևոր է նաև հեռավորության պահպանումը:

11. Որոշ դեպքերում պետք է նախապես ընտրել՝ ով պետք է անցկացնի գրույցը՝ տղամարդ, թե կին, կախված նրանից, թե ով է եղել բռնություն գործադրողը: Եթե մասնագետը, ինչ –որ կերպ նման է բռնարարին, ապա դա կարող է բարդացնել գործընթացը:

12. Մեծահասակները շատ հաճախ երեխաներին տալիս են այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ « ո՞վ», «ի՞նչ», « ե՞րբ», « որտե՞ղ», փորձելով պարզաբանել և պարզել տեղի ունեցածի մանրամասները: Հոգեթերապիայում այսպիսի հարցերի մեծ ծավալը կարող է բոլորովին անտեղի լինել, ընդ որում՝ այդպիսի հարցերն ընդհատում կամ անտեսում են երեխայի մտածողության գործընթացը: Մեծահասակները այս հարցերն օգտագործում են երեխային դատելու, մեղադրելու կամ քննադատելու համար:

Մանկավարժի հետ խորհրդակցելու գործընթացում կարևոր է պարզել ոչ այնքան, թե ինչ է ասել երեխան, այլ՝ ինչ է զգացել: Կատարվածի մասին ամբողջ պատմությունը կարող է լիովին պարզ լինել, եթե հարցեր տալու փոխարեն օգտագործեք ակտիվ լսելու տեխնիկան և երեխային հետադարձ կապ հաղորդեք ենթադրական արտահայտությունների (վարկածների) տեսքով, թե ինչ կարևոր մտքերի և խնդիրների հետ է կապված երեխան:

13. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երեխաները կարող են չափազանցնել իրողությունը, պետք չէ շտապել եզրակացություն անել: Մի՛ տվեք երեխային բռնության հետ կապված այնպիսի հարցեր, որոնք պահանջում են կոնկրետ պատասխաններ, կամ որոնք առաջնորդում են որոշակի եզրակացություններ: Եթե կասկածում եք՝ արդյո՞ք երեխան ճշմարտությունն է ասում, կարող եք հարցնել. «Ասա ինձ դրա շարունակությունը»:

14. Բարդ դեպքերում, ինչպիսին է բռնության փորձը, երեխան դժվար թե կիսվի իր զգացմունքներով և փորձով: Այնուամենայնիվ, հաղորդակցման ընթացքում լռությունը մեզ համար սովորաբար անընդունելի է. մենք փորձում ենք ինչ-որ կերպ լրացնել այդ բացը: Բենիամինը (1987) կարծում է, որ երեխան կարող է լռել հետևյալ պատճառով՝ երեխան պետք է տեսակավորի իր մտքերն ու զգացմունքները. Մանկավարժի կողմից ցույց տված հարգանքը նրա լռության նկատմամբ կարող է շատ ավելի արդյունավետ լինել, քան այդ պահին մանկավարժի խոսակցությունը:

15. Եթե երեխան խոսում է բռնության մասին, կամ գրույցի ընթացքում հաստատվում են մասնագետի կասկածները, ապա կարևոր է այդ ողջ ինֆորմացիան գրի առնել, ինչպես նաև նշել երեխայի վարքային առանձնահատկությունները, զգացմունքները և նշել ամսաթիվը:

2.2. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՏԵԽՆԻԿԱՆԵՐ

Դիտարկվող խնդիրների լուծման համար առաջարկում ենք հետևյալ քայլերը՝

Քայլ 1. Երեխայի մոտ վստահություն ցուցաբերելու կարողության զարգացում:

Բռնության ենթարկված երեխաները, որպես կանոն, դժվարությամբ են կոնտակտի մեջ մտնում թե՛ հասկակալիցների, թե՛ մեծահասակների հետ, որովհետև կորցրել են վստահությունը շրջապատողների նկատմամբ: Երեխաները հաճախ վախենում են, որ մանկավարժը կարող է իրենց մեղադրել: Մանկավարժական աջակցության գործընթացում մանկավարժը պետք է երեխայի հետ միասին ուսումնասիրի այն բոլոր հիմնական պահանջմունքները՝ սիրո, անվտանգության, որևէ խմբին պատկանելու, մտքերը և զգացողությունները որոնք երեխան ունեցել է, երբ կորցրել է մեծահասակների հանդեպ վստահությունը: Մանկավարժական աջակցության բավականին երկար աշխատանք պետք է նվիրված լինի մեծահասակների և հասակակիցների հետ վստահելի հարաբերություններ կառուցելու համար անհրաժեշտ հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Քայլ 2. Կուտակված հույզերի խոսքային և ոչ խոսքային ձևերի արտահայտման սովորեցում

Ֆիզիկական բռնությունը ծնում է բազմաթիվ բացասական հույզեր, մասնավորապես՝ զայրույթ, վիրավորանք, վախ, ասելության, ամոթի և մեղքի զգացում: Որպեսզի երեխան այս ապրումների հետ հետ չմնա միայնակ և կարողանա ճիշտ արձագանքել դրանց, նա պետք է հնարավորություն ունենա խոսելու այդ հույզերի և դրանք ծնող իրավիճակների մասին: Մակայն միշտ չէ, որ երեխան հեշտորեն կպատմի իրավիճակի մասին: Երբեմն թաքնված զգացմունքներն ու կարիքները չարտահայտելու դժվարությունը կարող է արտահայտվել չտարբերակված ագրեսիայով: Դա կարող է բացատրվել նրանով, որ երեխան մեծացել է մի միջավայրում, որտեղ անտեսվել է երեխայի անհատականությունը և սեփական կարծիքը արտահայտելու իրավունքը: Մանկավարժական աջակցության ընթացքում կարևոր է երեխային ցույց տալ և բացատրել, որ հույզերը չեն լինում վատը կամ լավը: Այն դեպքերում, երբ երեխան դժվարանում է խոսել իր հետ կատարվածի մասին, բացասական հույզերի արտահայտման լավագույն միջոցներ են հանդիսանում՝ նկարչաթերապիան, խաղաթերապիան, ավազաթերապիան:

Քայլ 3. Երեխայի վախերի հաղթահարում

Մանկավարժական աջակցության կարևորագույն փուլ է հանդիսանում երեխայի վախերի հաղթահարումը: Վախ լինել պատժված, մերժված, լքված, նմանատիպ վախերի հետ աշխատանքը պետք է շարունակվի մինչև երեխայի դատական գործի ավարտը: Զգացողությունները, որը ունեցել է երեխան բռնության ժամանակ կարող է առաջացնել անհանգստություն, *իրավիճակային կամ խուճապային վախ*: Իրավիճակային վախ կարող է առաջանալ այն դեպքում, երբ ստեղծվում է հարձակումը հիշեցնող իրավիճակ, կամ այն ժամանակ, երբ տեսնում են մարդկանց, ովքեր կապ ունեն բռնարարի հետ: Համարվում է, որ երեխաների մոտ այդպիսի զգացողություններ կարող են առաջանալ համի, հոտի, շոշափելիքի զգայությունների միջոցով, իսկ մեծերի դեպքում ավելի ազդեցիկ են խոսքերը, նկարները, մարդիկ: Սուր անհանգստության և

վախի համար առաջարկվում է մտավոր դադարեցման, դրական ներկայացման և թուլացման վարժություններով տեխնիկա: Աստիճանաբար, խաղերի, դերախաղերի, ավագաթերապիայի միջոցով երեխան կարող է սկսել վերահսկել իր վախերը և իր կյանք ներգրավվել այն մարդկանց ովքեր կապահովեն իր անվտանգությունը:

Քայլ 4. Մեղքի զգացման մեղմացում

Բռնության ենթարկված երեխան կարող է ունենալ վառ արտահայտված մեղքի, լքված լինելու զգացողություններ: Այն միտքը, որ հարազատներն ու ընկերները չեն կարող պաշտպանել նրան բռնությունից, կարող է ստիպել երեխային զգալ մեղավոր և ընկճված: Այս զգացումը տալիս է ճանաչողական գիտելիք այն մասին, թե ըստ երեխայի ինչն է ճիշտ և ինչը սխալ շրջապատող աշխարհում: Երեխան կարող է մտածել, որ նա ոչնչացրել է հարաբերությունները մոր կամ հոր հետ, երեխան պատասխանատվություն է ստանձնում իր սեփական ընտանիքի փլուզման համար: Այս բացասական զգացմունքները կարող են առաջացնել ինքնաքայքայիչ վարք, ինքնավնասում: Միայն մեծահասակների հետ հարաբերությունների հետևողականորեն ու զգուշորեն վերականգնմամբ կարող ենք մեղմել երեխայի մոտ ամոթի և մեղքի զգացումները:

Քայլ 5. Սովորեցնել ագրեսիան արտահայտելու և վերհսկելու կարողություններ:

Բռնության ենթարկված երեխաների ագրեսիվ դրսևորումները կանխելը բավականին նուրբ աշխատանք է, որի համար անհրաժեշտ է երեխաներին սովորեցնել ճանաչել սեփական հույզերը, կառավարել դրանք և արտահայտել դրական տարբերակով (առանց հարվածների և վիրավորանքների):

Քայլ 6. Ճանաչողական աղավաղումների շտկում:

Բռնության հետ կապված հուզական ապրումները հաճախ ուղեկցվում են սխալմունքային պատկերացումների ձևավորմամբ: Երեխան կարող է կատարվածի համար մեղադրել իրեն, քրոջը, ծնողին կամ այլ հարազատ մարդկանց, ինչը հիմնականում հասցեական չի լինում և կարող է առաջացնել

փոխհարաբերությունների և վարքի խանգարումների: Հետևաբար երեխայի հետ իրականացվող մանկավարժական աշխատանքը պետք է ուղղված լինի այս խաթարումների և դրանց հետևանքների շտկմանը:

Քայլ 7. Ինքնավստահության և ինքնագնահատականի ձևավորում/ կարգավորում:

Բոնության ենթարկված երեխաների մեծ մասն ունեն ցածր ինքնագնահատական. Երեխաները դժվարանում են արտահայտել իրենց ցնկությունները, կարծիքը: Դժվար են շփման մեջ մտնում հասակակիցների հետ, շփման ընթացքում ավելի շատ պասիվ են և անիքնավստահ:

Այսպիսով ի՞նչ պետք է իմանա երեխան, որպեսզի կարողանա պաշտպանել ինքն իրեն:

Երեխան կարող է խուսափել դժվարություններից, եթե նա հստակ գիտի, թե ինչ պետք է անի, երբ հայտնվի վտանգավոր իրավիճակ-կում: *Այս նպատակով մանկավարժական աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է երեխաներին սովորեցնել հետևյալ հմտությունները՝*

Վճռականորեն ասել «Ոչ», այն դեպքում, երբ երեխայից խնդրում են կամ երեխայի հանդեպ կատարում են այնպիսի գործողություններ, որոնք կարող են երեխային վնաս հասցնել: Այս հատկությունը ձևավորելու համար կարելի է իրականացնել հետևյալ վարժությունը՝ «Սովորում ենք ասել՝ Ոչ»

Անձնական տարածքի գիտակցում: Երբ երեխաները ճանաչում են իրենց մարմնի մասերը, գիտեն, թե ինչպես է իրենց մարմինը գործում, ապա հասկանում են, որ այն պատկանում է միայն իրենց, և ոչ ոք առանց իրենց թույլտվության իրավունք չունի դիպչել դրանց, բացառությամբ այն մարդկանց, ովքեր չեն չարաշահում իրենց վստահությունը: Անգամ փոքր երեխաները պետք է իմանան մարմնի մասերի, ներառյալ սեռական օրգանների ճիշտ անունները:

Անհրաժեշտ է երեխաների հարցերին պատասխանել պարզ և հստակ, օգտագործելով այնպիսի բառեր, որոնք երեխայի կողմից հասկանալի կլինեն: Սանհանգույցը կարող է լինել ամենահարմար տեղը անձնական անվտանգության դասընթացների համար: Երեխաներին պետք է ցույց տալ սեռական օրգանները և նշել,

որ դրանք համարվում են խիստ անձնական և ոչ ոք, բացի բժշկից (անհրաժեշտության դեպքում) իրավունք չունի դիպչել դրանց, և երեխան էլ իր հերթին իրավունք չունի դիպչել այլ մարդկանց այդ հատվածներին:

Հնարավորինս խուսափել պրոբլեմային իրավիճակներից,

Սովորեցնել ինքնապաշտպանման հմտություններ,

Արտահայտել սեփական կարծիքը առանց կաշկանդվելու,

Սովորեցնել ընդունելի և անընդունելի հպումները,

Վստահել սեփական զգացմունքներին և ինտուիցիային, այդպիսով երեխան կկարողանա ճանաչել հնարավոր վտանգը և խուսափել դրանից,

Այս խնդիրների հետ աշխատանքում արդյունավետ են՝ հոգեթերապիայի, վիզուալիզացիայի, վարքային թերապիայի, գեշտալտ թերապիայի, արտթերապիայի, խաղաթերապիայի տարբեր ձևերի կիրառումը:⁵

Թերևս երեխաների հետ աշխատող մասնագետների կողմից բախված բազմաթիվ և բազմամակարդակ խնդիրներից՝ առաջարկվում է ավելի էկլեկտիկ, այսպես կոչված, բազմամոդալ մոտեցում ցուցաբերել խորհրդատվության մեջ, որպեսզի կարողանանք աշխատել բոլոր երեք մակարդակներում: Ստորև ներկայացնում ենք Ձեզ մի քանի ուղղություններ և տեխնիկաներ որոնք կարող ենք օգտագործել բռնության ենթարկված երեխաների հետ աշխատանքում:

Խաղային հոգեթերապևտիկ մեթոդներ. ուղղորդված վիզուալիզացիա:

Ուղղորդված վիզուալիզացիան իր մեջ ներառում է ինչպես հանգստանալ և թուլանալ սովորեցնելը, այնպես էլ պատկերացնել, վերարտադրել այնպիսի իրավիճակներ, որտեղ երեխան հայտնվում է դժվար կամ վտանգավոր հանգամանքներում և հաջողությամբ կարողանում է դրանք հաղթահարել:

⁵ Психологическая помощь детям — жертвам насилия / Составитель О.А. Пчельникова. — Ижевск: Ижевская городская общественная организация «Центр социальных и образовательных инициатив», 2012. — 48 с

Աշխատանքի նպատակն է օգնել երեխաներին կյանքի վերաբերյալ դրական վերաբերմունք ստեղծել:

Մանկավարժը շեշտը դնում է երեխայի բնավորության ուժեղ գծերի և երեխայի դրական վերաբերմունքի վրա, որոնք օգնում են դժվար իրավիճակներում:

Ուղղորդված վիզուալիզացիայի իրականացման համար անհրաժեշտ ցուցումներ՝

Անհրաժեշտ է երեխաներին հիշեցնել, որ պատկերի ուղղորդված արտացոլումը նրանց թույլ է տալիս ստեղծել, երևակայել և երազել: Այն, ինչ տեղի է ունենում ձեր երևակայության մեջ, այդ ամենը շատ լավ է և ճիշտ, դրա մասին պետք չէ մտածել, պարզապես երևակայեք: Եթե ձեր երևակայության մեջ ինչ-որ բան դուր չի գալիս կարող եք այն ջնջել: Հիշե՛ք, որ ձեր երևակայություններն ու երազանքները կախված են ձեզանից, դուք եք դրանք ստեղծել: Մի՛ պնդեք, որ երեխաները փակեն իրենց աչքերը, պարզապես բացատրեք, որ փակ աչքերով նրանք ավելի շատ կվայելեն իրենց երևակայական աշխարհը : Երբ վարժությունը կրկնվում է, երեխաները սկսում են ավելի շատ վստահել մասնագետին. Նրանք պատրաստ են լինում ավելի երկար նստել հանգիստ և փակ աչքերով:

Վարժությունն ավարտելուց հետո դուք կարող եք հիշել տեղի ունեցածը, մտածել դրա մասին և հասկանալ, թե ինչն էր ձեզ համար օգտակար, ինչը՝ ոչ : Որոշ երեխաներ մեծ դժվարությամբ են սկսում արտացոլումը՝ կենտրոնանալու դժվարության պատճառով:

Վարժություններն ուղղված են երեխայի հանգստության ձեռք բերելուն և օգնում են գիտակցել, որ երևակայության օգնությամբ կարող են հասնել ցանկալի վիճակի: Այս վարժությունները թեթևացնում և հանգստացնում են երեխային:

Խաղաթերապիա

Խաղաթերապիան համարվում է 2-12 տարեկան երեխաների հետ աշխատանքի հիմնական մեթոդ՝ պայմանավորված սեփական մտքերն ու զգացմունքներն արտահայտելու դժվարությամբ:

Երեխան խաղի ընթացքում բացահայտ քննարկում է իր խնդիրներն ու մտահոգությունները:

Առաջարկվող խաղեր՝

Խաղ պլաստիլինով

Խնդիրները, որոնք լուծում է մանկավարժը՝

Օգնեք երեխային հանգստանալ,

Օգնեք երեխային արտահայտել իր զգացողությունները. բռնության ենթարկված երեխաների մոտ դրանք կարող են լինել՝ մեղքի զգացում, ագրեսիվություն, ընկճվածություն, ամոթ:

Ստեղծեք և պահպանեք երեխայի հետ կապը,

Օգնեք երեխային ձևավորել ադեկվատ ինքնագնահատական պահպանելով հետևյալ կանոնները՝ անվերապահորեն ընդունել այն ինչ երեխան պատրաստել է պլաստիլինից, հիշե՛ք, որ պլաստիլինի հետ կատարված գործողություններում չկա ճիշտ կամ սխալ:

Հրավիրեք երեխային պատրաստել որոշ պատկերներ և գրուցել:

Առաջարկեք երեխային «դառնալ» պլաստիլին. երեխային հնարավորություն տալով պարզապես խաղալ պլաստիլինի հետ՝ առանց խոսելու:

Խաղ տիկնիկներով

Իրվինը (1993) տիկնիկային խաղը համարում է ինչպես ախտորոշիչ, այնպես էլ բուժական: Ըստ Ջենկսի և Բեքի (1993), մատներով տիկնիկային խաղերը ևս շատ արդյունավետ են: Չնայած այն հանգամանքին, որ տիկնիկը երեխայի ձեռքին է, երեխաները նրանց համարում են իրենցից առանձին և այդպիսով տիկնիկների միջոցով կարողանում են արտահայտել սեփական հույզերը և խոսել իրենց ներքին բախումների մասին:

Խնդիրները, որոնք լուծում է մանկավարժը՝

Օգնել երեխային բացահայտել իր վախերը, ներքին հակասությունները՝ տրավմատիկ իրավիճակներ խաղալով,

Նպաստել հույզերի ակտիվացմանը՝ դրանք արտհայտելու համար,
Դարձնել տիկնիկի խաղը երեխայի իրական կյանքի արտացոլում,
Օգնել երեխային տիկնիկների միջոցով պաշտպանված զգալ. «դա ես չեմ ասել,
տիկնիկն է ասել», «ես զգում եմ այն, ինչ տիկնիկն է զգում»,
Օգնել երեխային նույնականանալ տիկնիկի հետ,
Օգնել երեխային զգալ ընդունված, նույնիսկ անընդունելի որակների մեջ:

Խաղային թերապիայի կարգը.

Մանկավարժն առաջարկում է ընտրել այն տիկնիկները, որով երեխան կցանկանա
ինչ-որ պատմություն պատմել (կամ պատմել կոնկրետ մարդկանց մասին, ում
ճանաչում է երեխան, կամ որը կապված է բռնության հետ):

Մանկավարժը նշում է, թե ո՞ր տիկնիկն է ընտրում երեխան, և որին մերժում,

Մանկավարժը մտնում է խաղի մեջ և խնդրում երեխային իրեն ներկայացնել
տիկնիկները՝ բաց հարցերի միջոցով օգնելով նրան նկարագրել դրանք :

Երբ սյուժեն խաղում են, մանկավարժը միջամտում է միայն անհրաժեշտության
դեպքում կամ երեխայի խնդրանքով:

Խաղի ավարտին մանկավարժը զրուցում է տիկնիկների հետ՝ կրկին բաց հարցեր
տալով տիկնիկների մտքերի, ապրումների և գործողությունների մասին, ապա
աստիճանաբար և աննկատելիորեն փոխանցելով իր հարցերն ու
մեկնաբանությունները անմիջապես երեխային:

Արտ-թերապիա

Նկարչաթերապիա

Երեխաները տեղյակ չեն, որ իրենց նկարներն արտացոլում են սեփական մտքերն
ու զգացմունքները, ուստի նկարելիս նրանք օգտագործում են նվազագույն
պաշտպանական մեխանիզմներ: Նկարչություն օգտագործվում է երեխայի հետ կապ
հաստատելու, հաղորդակցվելու, հուզական կոնֆլիկտները լուծելու համար:

Թերապիայի անցկացման տարբերակները՝

Առաջարկել երեխային նկարել այն լավագույնը, որն իր հետ պատահել է այսօր կամ նախորդ օրերին և նկարել ամենավատը, որն իր հետ պատահել է,

Առաջարկել երեխային նկարել իր ընտանիքը. դուք կարող եք խնդրել երեխային ներկայացնել ընտանիքի անդամներին կենդանիների պատկերների տեսքով,

Առաջարկել նկարել ինքն իրեն,

Առաջարկել նկարել երեխայի լավագույն ընկերոջը, կամ ամենահարազատ մեծահասակին,

Առաջարկել նկարել իր երազանքը, ցանկությունը,

Առաջարկել պատրաստել իր մասին կոլաժ ամսագրերի կտորներով,

Նկարեք ձեր կյանքի ճանապարհը՝ խոչընդոտներ, արգելքներ, հանգստի վայրեր և այլն: Հարցրեք երեխային, թե որտե՞ղ է այս պահին գտնվում և որտեղ կցանկանար լինել:

Թերապիայի անցկացման կարգը

Խնդրեք երեխային կիսվել նկարչության ընթացքում առաջացած զգացողություններով,

Խնդրեք երեխային պատմել ավարտած լուսանկարի մասին,

Տվեք երեխային բաց հարցեր նկարի դետալների, մանրամասների մասին՝ գույն, ձև, առարկաներ,

Խնդրեք երեխային նկարագրել նկարը՝ օգտագործելով «Ես» դերանունը, այնպես, կարծես երեխան դարձել է այդ նկարը. Օր.՝ « Ես այս նկարն եմ, կարմիրով եմ ներկված...»,

Երեխայի ուշադրությունը հրավիրեք նկարի որոշ մանրամասների վրա. «ի՞նչ է մտածում այս շրջանակը», «ի՞նչ է նա պատրաստվում անել» և այլն,

Հրավիրեք երեխային երկխոսություն վարել գծագրի երկու մասերի, օրինակ՝ մեքենայի և ճանապարհի, երջանիկ մարդու և դժբախտ մարդու միջև,

Երեխայի ուշադրությունը հրավիրեք ընտրված գույների վրա. «իսկ ի՞նչ են քեզ համար նշանակում պայծառ և (մոայլ) գույները», «կարծե՞ս թե քեզ համար շատ կարևոր էր այն սեւ նկարել»:

Հետևեք երեխայի ձայնին, կեցվածքին, դեմքի արտահայտությանը, շնչառությանն ու լրությանը: Լռությունը կարող է նշանակել ինչ-որ բանի փորձառություն, մտածում, հիշում, անհանգստություն, վախ կամ ինչ-որ բանի գիտակցում,

Ուշադրություն դարձրեք նկարում բաց թողած դետալների կամ դատարկ տարածությունների վրա և քննարկեք դրանք երեխայի հետ,

Սկսեք քննարկման գործընթացը նրանից, ինչը երեխայի համար ավելի հեշտ է ասել՝ աստիճանաբար անցնելով ավելի բարդ կամ ցավոտ պահերի,

Կարևոր է՝

Ապահովել խոսքի ամբողջական ազատություն,

Անվերապահորեն ընդունել երեխային այնպիսին, ինչպիսին, որ կա,

Ապահովել երեխայի ապահովության զգացումը,

Ուշադիր վերահսկել գործընթացը,

Չշտապել,

Չզնահատել,

Չտալ ցուցումներ:

Ավագաթերապիա

Խաղաթերապիայի այս տարբերակը ստեղծվել է 1939 թվականին Մարգարեթ Լոուենֆելդի կողմից, նա այն անվանեց «աշխարհ ստեղծելու տեխնիկա»: Բարնետը (1991) նշում է, որ ավագով խաղը մանկավարժին հնարավորություն է տալիս մուտք գործել երեխայի ներքին աշխարհ: Ավագաթերապիան երեխայից հատուկ հմտություններ չի պահանջում, ինչպես նկարելիս կամ պատմություններ պատմելիս:

Խաղ ավագով

Նպատակը՝ երևակայության և կոնֆիլտների փոփոխություն/ լուծում:

Տևողությունը՝ 20-30ր.

Անհրաժեշտ պարագաներ՝

Ալլանը և Բերին (1993) առաջարկում են օգտագործել երկու ջրակայու ավազի տուփ՝ մոտավորապես 50x75x7,5 սմ՝ մեկը չոր ավազի համար, մյուսը՝ թաց,

Համապատասխան չափերի մարդուկներ, կենդանիներ, տներ, կահույք, մասնագիտություններ և այլն,

Երեխային առաջարկում ենք փակել աչքերը և պատկերացնել ինչ-որ տեսարան, իրավիճակ, ինչ-որ աշխարհ և առաջարկում պատկերել այդ աշխարհը ավազի մեջ:

Գործընթացի ավարտին կամ ժամանակ առ ժամանակ խնդրեք երեխային խոսել այն մասին՝ ինչ է ուզում պատկերել կամ նկարագրել: Բարձրաձայն մի մեկնաբանեք կամ վերլուծեք, թե ինչ է պատահում երեխայի հետ խաղի ընթացքում:

Ցուցումներ մանկավարժին՝

Դիտեք և լսեք,

Մի՛ ընդհատեք խաղը «Ո՛չ, դու դա չես անում»,

Մի՛ մեկնաբանեք «Օ՛Օհ, ինչ գեղեցիկ մարդ է»,

Եթե երեխան խաղալու ընթացքում խոսում է, ապա օգտագործեք պարզաբանման կամ ակտիվ ունկնդրման տեխնիկան՝ պարզաբանելով ասվածը:

Դիտեք վարքը, ինչպես նաև այն թեմաները, որոնք կրկնվում են:

Զգուշորեն վերահսկեք ձեր սեփական զգացմունքները և այն, ինչ հուշում է ինտուիցիան:

Երբ երեխան պատրաստ է, դուք կարող եք նրան զգուշորեն տալ այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ «Որտեղ եք այստեղ», «ի՞նչ է հիշեցնում այս տեսարանը ձեզ»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով կատարված հետազոտությունը թույլ տվեց բացահայտել մի շարք առանձնահատկություններ.

- Բուլինգի և՛ պատճառները, և՛ դրսևորումները բազմաշերտ են և պայմանավորված են թե՛ հասարակության մշակույթային առանձնահատկություններով, թե՛ կրթական թերություններով:
- Խնդրահարույց են և՛ աշակերտ-աշակերտ փոխհարաբերությունները, և՛ աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերությունները:
- Ուսուցիչների հետ փոխհարաբերություններում որոշ դեպքերում աշակերտները իրենց զգում չկարևորված, իրենց կարիքները անտեսված:
- Որոշ ուսուցիչների կողմից առկա է աշակերտների հանդեպ տարբերակված մոտեցում:
- Բուլինգի տեսանկյունից խոցելի են կոմունիկացիայի արդյունավետ հմտություններ չունեցող, և շատ ընկերներ չունեցող աշակերտները:

Եթե Բուլինգը ժամանակին չվերացվի կարող է վատ անդրադառնալ աշակերտի վրա, նույնիսկ մահացու հետևանքներ ունենա: Լուծումներ միշտ կան, այս խնդրի լուծումն ու կանխարգելումը պետք է լինեն երեխա, ծնող և ուսուցիչ ակտիվ համագործակցություն ու միևնույն ժամանակ նրանց հանդեպ անհատական մոտեցման շնորհիվ: Պետք է նշել, որ Բուլինքի կանխարգելման հարցում ուսուցիչներն ունեն իրենց մեծ ազդեցությունը: Եվ այն բոլոր քայլերը, ուղղությունները և տեխնիկաները որոնք նշվել էին հետազոտական աշխատանքում կօգնեն տվյալ աշակերտին հաղթահարել առաջացած խնդիրները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ օրենքը երեխայի իրավունքների մասին, Երևան 1996, էջ 2:
2. Алексеева Л.С. О насилии над детьми в семье // Социоло-гичес-кие исследования. 2003. № 4. С. 34-37
3. Гиндин Г. И., Духова О. Б. Социально-психологическая помощь детям-жерт-вам сексуального насилия в семье. Вологда, 1997.
4. Догадина М. А., Пережогин Л. О. Выявление, профилактика, реабилитация потерпевших. М.: Сам себе адвокат, 2000.
5. Зиновьева Н. О., Михайлова Н. Ф. Психология и психотерапия насилия. Ребенок в кризисной ситуации. -СПб.: Речь, 2003. -248 с.
6. Козлова Г.Л., Мирейчик Л.Н., Пряхина М.В. Насилие над детьми. Его виды и воз-можности предупреждения. Мн., 2003. 76 с.
7. Соколова ЕЛ. Влияние на самооценку нарушений эмоциональ-ных контактов между родителем и ребенком и формирова-ние аномалий личности / Семья и формирование личности. М.: Изд-во МГУ, 1981.
8. Смагина Л.И., Пряхина М.В. Социально-психологическая защита детей дошколь-ного возраста в ситуациях насилия // Проблемы выживания. 2000. № 3. С. 104-109.
9. Синягина Н. Ю. Психологические аспекты жестокости в детско-родительских отношениях. — М.: РАГС, 1996. — 110с.
10. Социальная работа с семьей: мир взрослых и детей / Под. ред. Ж.И. Мицкевич. Мн., 2002. 239 с.
11. Социально-психологическая реабилитация детей, пострадавших от жестокого обращения. Москва, 2013. 37с.
12. Романова Н.М. Методы психологической диагностики сексуаль-ного насилия несовершеннолетних — Саратов, 2017. — 65 с.: ил.

13. Психологическая помощь детям — жертвам насилия / Составитель О.А. Пчельникова. — Ижевск: Ижевская городская общественная организация «Центр социальных и образовательных инициатив», 2012. — 48 с
14. «Профилактика насилия и жестокого обращения с детьми», Ш. К. Сергеевна, К.И. Германовна, Т. Е. Владимировна, Полевский 2014, стр.26-51
15. «Профилактика и коррекция последствий жестокого обращения с детьми и подростки, методические рекомендации, Н.Б Шевченко, О.Ю. Зорина, Н.Ю Добрина, А.Е. Дуракова, Бийск 2014, стр 111-236
16. «Программа психологической реабилитации детей дошкольного возраста, подвергшихся жестокому обращению, Н.Ю Добрина, стр 111-154
17. Программа «Позитивные навыки безконфликтного общения у детей школьного возраста в рамках профилактики жестокого обращения, О.Ю. Зорина, стр155-200
18. Программа «Оптимизация детско-родительские отношения, в рамках профилактики жестокого обращения с детьми, О.Ю. Зорина стр 201-236